Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի

2014-2015 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգից բխող

միջոցառումների պլան

Ը/Կ	Նպատակը	Միջոցառումներ	Պատասխա-նատու	Ժամկետ
1	2014-2015 ուսումնական տարվա ընթացքում կրթության չափորոշիչների պահպանման, մասնագիտությունների խորացման հաշվին բարձրացնել ֆակուլտետի հեղինակությունը, ամրապնդել մրցունակության, ֆակուլտետի համալրման ռեզերվները:	Ուսանողներին իրազեկ դարձնել կրթական չափորոշիչներին: Տարվա ընթացքում ուսանողներին խորապես ծանոթացնել մասնագիտությունների շուկայական բնութագրիչներին: Կազմակերպել մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների հանդիպումներ ուսանողների հետ:	Դեկանատ, ամբիոններ	Տարվա ընթացքում
2	Ուսուցումը կազմակերպել ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան: Ճիշտ ընտրել բուհական կրթությանն անհրաժեշտ ձևերն ու մեթոդները:	Օգտագործել ինտերնետային ցանց, էլեկտրոնային գրատախտակները, ստեղծել էլեկտրոնային դասախոսությունների լայն ցանց:	Ամբիոններ	Տարվա ընթացքում
3	Ուսանողներին ուստարվա յուրաքանչյուր փուլում նախապատրաստել կարիերայի, նրանց զինել գործնական գիտելիքներով: Կապ հաստատել բանկերի, ֆինանսական և տնտեսական այլ հիմնարկների աշխատողների հետ, նրանց հրավիրել ֆակուլտետում անցկացնելու պարապմունքներ, մասնագիտական ցերեկույթներ:	Ինտերնետային կայքում զետեղել կարիերայի չափանիշները, դրանք գործնականում իրականացնելու հիմնուղիները: Կազմակերպել «Քո մասնագիտությունը ժամանակակից աշխարհում » թեմայով ցերեկույթ: Կազմակերպել բանավեճ «Ինչպես եք պատկերացնում բուհի շրջանավարտին» թեմայով:	Ամբիոններ, ուսխորհուրդ	Տարվա ընթացքում
4	Ֆակուլտետում բարձրացնել կարգապահությունը: Այս ուղղությամբ հսկողական աշխատանք ծավալել բոլոր՝ ուսումնական, գիտական, կատարողական մակարդակներում: Կարգապահությունը ծառայեցնել ուսուցման հատույցի բարձրացմանը, ժամանակի պահանջներին համաքայլ ընթանալուն:	Ստեղծել կարգապահությունը հետազոտող հանձնախումբ, հետազոտության արդյունքները քննարկել ֆակուլտետի խորհրդի նիստում:	Կարգապահական հանձնաժողով	Յուրաքանչյուր շաբաթ

5	Կրթության բովանդակության նորացում և կատարելագործում՝ ուսումնական գործընթացի և գիտական հետազոտությունների միավորմամբ: Մասնագետների պայմանագրային պատրաստման լիարժեք իրականացում: Կրթական ծրագրերի իրագործման պարբերական ստուգում:	Ուսումնասիրել կրթության բովանդակությունը հանրապետության բուհերում: Հետևել նորին, առաջավորին: Ուսումնական գործընթացը ամրակայել գիտական հիմքերով: Պարբերաբար անդրադառնալ մասնագիտության հայեցակարգի նորացմանը և դրա պահանջների փուլային կատարմանը:	Ամբիոններ	Յուրաքանչյուր կիսամյակի վերջում
6	Կրթության որակի կառավարման համակարգի ամրապնդում: Որակի ներքին կանոնավոր աուդիտի ապահովում: Մարզի պետական և մասնավոր գործատուներին ընդգրկել աուդիտի հանձնաժողովում:	Ստեղծել որակի աուդիտի հանձնախումբ բարձրորակ մասնագետներից, գործատուներից:	Ամբիոններ, աուդիտի հանձնաժողով, գործատուներ	Տարվա ընթացքում
7	Կրթության գործընթացի տեղեկատվական ապահովում, էլեկտրոնային ռեսուրսներով լրիվ ապահովում՝ շնորհիվ տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցի:	Ստեղծել էլեկտրոնային ռեսուրսները օգտագործելու աստիճանը ուսումնասիրող խումբ	Դեկանատ	Տարվա ընթացքում
8	Դասախոսների և ուսանողների գիտական հետազոտությունների զարգացում, մագիստրոսական կրթության գիտական հիմքերի ընդլայնում, մագիստրոսների հետազոտությունների տպագրության նախապատրաստում: Մագիստրոսական ավարտաճառերին գործատու կազմակերպությունների հմուտ մասնագետների կողմից օժանդակ գրախոսությունների ապահովում:	Ուսումնասիրել կատարված հետազոտությունների որակն ու քանակը՝ ըստ առանձին դասախոսների: Լավագույններին ներկայացնել խրախուսման:	Ամբիոններ	Տարվա ավարտին
9	Կարևորություն տալ պրակտիկաներին, դասավանդման մտազննական և գործնական եղանակներին: Ավարտական ատեստավորման քննական տոմսերում առաջադրել պրակտիկ լուծումներ պահանջող հարցեր: Լայն տեղ տալ ուսուցման գործնական ձևերին և եղանակներին: Պարբերաբար ստուգել ուսանողների գործնական կարողությունները: Ուսանողի մեջ ձևավորել կիրառական հմտություններ: Նա պետք է կարևորի անհատական աշխատանքը:	Պրակտիկայի վայրի ճիշտ ընտրություն: Մասնագետների ուժերի ընդգրկում պրակտիկայի կատարելագործման գործում: Պրակտիկաների արդյունքների քննարկումներ ֆակուլտետի խորհրդի նիստերում:	Դեկանատ, ամբիոններ	Պրակտիկայի ժամանակահատվածում

10	Ուսումնական գործընթացը պետք է դարձնել գրավիչ, դասախոսը պետք է նախապես իմանա դասախոսության ներգործունության և ուսանողների ընկալման աստիճանը: Հարցում ուսանողների շրջանում դասախոսության գրավիչ լինելու վերաբերյալ: Դասախոսն իր դասախոսության հատույցը ստուգում է հարցերի, պրոբլեմների առաջադրման և լուծման միջոցով: Գրավչությունը պետք է զուգորդել ճշգրտության ու տեղեկատվության խորացման հետ:	Կազմակերպել դասալսումներ, քննարկումներ, հարցումներ ուսանողների շրջանում: Դասախոսությունների գիտական որակի ստուգում:	Դեկանատ, ամբիոններ	Ուստարվա ընթացքում
11	Ուսանողների դաստիարակության քաղաքացիական և մարդասիրական համակարգի ձևավորում: Ուսանողական ինքնակառավարման համակարգի կատարելագործում: Մարդասիրական դասախոսական միջավայրի ձևավորում:	Քաղաքացիական թեմաներով զրույցներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ, հանդիպումներ արցախյան պատերազմի վետերանների հետ: Ուսանողների ինքնակառավարման աջակցություն դեկանատի կողմից: Դասախոսների և ուսանողների հանդիպումների կազմակերպում:	Դեկանատ, ամբիոններ, ուսխորհուրդ	Ուստարվա ընթացքում
12	Դասախոսությունները ինտերնետային միջոցներով դարձնել ուսանողների սեփականությունը, որը հնարավորություն կընձեռնի դասաժամը դարձնել առավել արդյունավետ, այն վերածել գիտական բանավեճի: Դասախոսությունների կարևոր նպատակ համարել ուսանողի վերլուծական ունակությունների զարգացումը: Ուսանողները պետք է կարողանան խնդիրը բազմակողմանի քննարկել, կողմնորոշվել տարբեր եզրակացությունների մեջ և հիմնավորել սեփական եզրահանգումը:	Ուսանողների շրջանում ձևավորել բազմակարծություն: Հանձնարարել ուսումնասիրել պարբերական գիտական ձեռնարկներ: Պահանջել համակարգչային նյութերի ընտրություն և ուսումնասիրություն: Կազմակերպել գիտական բանավեճեր դասախոսների ներկայությամբ:	Ամբիոններ, ուսխորհուրդ	Տարվա ընթացքում
13	Պրակտիկաները դարձնել մասնագետների պատրաստման կարևորագույն գործոն, դրանք պետք է ձևավորեն գործնական լիարժեք հմտություններ: Այստեղ պետք է ստուգել տեսական գիտելիքների արժեքը: Պրակտիկաները պետք է ապագա մասնագետների կարողությունները որոշակիորեն բացահայտեն, ցույց տան մասնագետի ձևավորման աստիճանը: Պրակտիկայի վայրում ընտրել ուսանողների հետ տարվող աշխատանքի առավել հմուտ համակարգող: Յուրաքանչյուր օր մանրազննին վերլուծել ուսանողների փորձի ձեռքբերման ընթացքը: Պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է տիրապետի շուկայական մեխանիզմներին:	Պրակտիկաներին նախապատրաստվել նորագույն պահանջներով: Համատեղ ծրագրեր իրականացնել պրակտիկայի վայրի և գործատու կազմակերպությունների հետ:	Դեկանատ, ամբիոններ	Պրակտիկայի շրջանում

	Պրակտիկան ուսանողին պետք է տա աշխատանքային փորձ, ամրապնդի մասնագիտական կարողությունները:			
14	Քննությունների նախապատրաստման շրջանում լիարժեք օգտագործել դասախոսների ուժերը, խորհրդատվությունները դարձնել արդյունավետ, վերլուծական, ուսանողը պետք է համոզվի, թե գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ինչ սահմանների է ինքը տիրապետում, ձեռք բերի վստահություն: Քննությունը առաջին հերթին պետք է դառնա ինքնաստուգում: Ուսանողները պետք է կարողանան քննություն հանձնել համակարգչի առջև:	Համակարգչի միջոցով քննությունների հանձնման նախապատրաստում: Քննությունների թափանցիկություն, արդյունքների հրապարակայնություն: Քննությունների արդյունքների քննարկում ուսանողների շրջանում:	Դեկանատ, ամբիոններ, ուսխորհուրդ	Քննաշրջանների ում
15	Ֆակուլտետի կապի ամրապնդում համալսարանի մյուս ֆակուլտետների հետ, մասնագետների պատրաստման փորձի փոխհաշվառում և խորացում, մեթոդական զինանոցի հարստացում: Սերտ կապ պահպանել գործատուների ինչպես մարզում, այնպես էլ մայրաքաղաքում գործող ֆիրմաների, հիմնարկների հետ: Այցելություններ հանրապետության համապրոֆիլ բուհեր և փոխայցելությունների կազմակերպում:	Փոխայցելությունների պայմանավորվածության ժամանակացույցի պատրաստում: Մշակել միջոցառումների ծրագրեր: Հետազոտել փոխայցելությունների արդյունքները: Համատեղ ուժերով ձևավորել առաջավոր փորձի դպրոց:	Դեկանատ, ամբիոններ	Ուստարվա ընթացքում
16	Ֆակուլտետի զարգացման հայեցակարգի պահանջների կատարումը ստուգելու համար անցկացնել մոնիթորինգ: Հայեցակարգի կարճաժամկետ ծրագրերը ճկուն փոփոխությունների ենթարկել՝ ելնելով ԳՊՀ գիտխորհրդի նոր որոշումներից , կազմակերպել ինքնագնահատումներ ամբիոնների կողմից և արդյունքները հրապարակել: Շարունակել ֆակուլտետի զարգացման նախորդ հայեցակարգի պահանջների իրականացման ստուգումը, հայեցակարգային խնդիրները դիտելով միմյանցից անբաժան:	Ստուգել հայեցակարգի դրույթների իրականացումը՝ կատարման պատասխանատուների զեկուցագրերով	Դեկանատ, ամբիոններ	Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին